

**ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե**  
**Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ 5/2**

**5 փետրվարի 2014 թ.**

Քննարկվեց «Ժայռ» ՍՊԸ 20.11.2012 թ-ի թիվ 10 գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ Եղեգնաձորի ՏՀՏ 30.10.2012 թ-ի թիվ 1002559 ստուգման ակտի դեմ:

Համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 16.05.2012 թ-ի թիվ 1002559 հանձնարարագրի ՀՀ օրենսդրությամբ հարկային մարմնին վերապահված իրավասության սահմաններում «Ժայռ» ՍՊԸ-ում (այսուհետ նաև ընկերություն) կատարվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ Եղեգնաձորի ՏՀՏ 30.10.2012 թ-ի թիվ 1002559 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 17.031.158 դրամ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Նախ նշվեց, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի 11.12.2012 թ-ի նիստում քննության է առնվել «Ժայռ» ՍՊԸ 20.11.2012 թ-ի թիվ 10 գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ Եղեգնաձորի ՏՀՏ 30.10.2012 թ-ի թիվ 1002559 ստուգման ակտի դեմ: Արդյունքում ընդունվել է թիվ 54/2 որոշումը, որի համաձայն ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետի դրույթներով «Ժայռ» ՍՊԸ 20.11.2012 թ-ի թիվ 10 գանգատի հիման վրա ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը կասեցվել է:

Սույն գործի վերաբերյալ հարկ է նշել, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ հետաքննության վարչություն «Ժայռ» ՍՊԸ տնօրեն Տիգրան Պողոսյանի վերաբերյալ ուղարկված փաստաթղթերի հիման վրա նախապատրաստված նյութերով 06.11.2013 թ-ին քրեական գործի հարուցումը մերժվել է:

Հարկ է նշել նաև, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ Եղեգնաձորի ՏՀՏ կողմից դիմում է ներկայացվել ՀՀ վարչական դատարան ընդդեմ «Ժայռ» ՍՊԸ-ի 30.10.2012 թ-ի թիվ 1002559 ստուգման ակտով առաջադրված 17.031.158 դրամ գումարը բռնագանձելու պահանջի մասին վճարման կարգադրություն արձակելու վերաբերյալ: Ընկերությունը ներկայացրել է հակընդդեմ հայց ընդդեմ ՀՀ ԿԱ ՊԵԿ Եղեգնաձորի ՏՀՏ 30.10.2012 թ-ի թիվ 1002559 ստուգման ակտը վերացնելու պահանջի մասին: Արդյունքում ՀՀ վարչական դատարանի 29.05.2013 թ-ի թիվ ՎԴ 3/0082/05/13 վճռով ՀՀ ԿԱ ՊԵԿ Եղեգնաձորի ՏՀՏ հայցը բավարարվել է և վճռվել է «Ժայռ» ՍՊԸ-ից հօգուտ պետական բյուջեի բռնագանձել 17.031.158 դրամ գումար:

Նշված վճռի դեմ «Ժայռ» ՍՊԸ-ի կողմից բերվել է վերաքննիչ բողոք, որն այժմ գտնվում է ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի վարույթում:

Վերոգրյալ փաստական հանգամանքների վերաբերյալ հարկ է նշել, որ համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին կետի «դ» ենթակետի. «Դիմումով հարուցված վարչական վարույթը կարճվում է, եթե դատարանի վարույթում գտնվում է միևնույն անձանց միջև, միևնույն առարկայի վերաբերյալ և միևնույն հիմքերով գործ»:

Նույն օրենքի 70-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն. «Եթե ակտը բողոքարկվել է վարչական և դատական կարգով միաժամանակ, ապա բողոքը ենթակա է դատական քննության, որի դեպքում վարչական մարմնում հարուցված վարույթը կարճվում է»:

Ելնելով վերոգրյալից, ինչպես նաև ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին կետի «դ» ենթակետի և 70-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթներով Հանձնաժողովը գտնում է, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի 11.12.2012 թ-ի թիվ 54/2 որոշմամբ կասեցված վարչական վարույթը ենթակա է վերսկսման և կարճման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

### ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի 11.12.2012 թ-ի թիվ 54/2 որոշմամբ կասեցված վարչական վարույթը վերսկսել և կարճել:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ